

**«ՍՊԻՏԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրով նախատեսված է մասնակի վերանորոգել «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքը, մասնավորապես ջերմամեկուսացնել մասնաշենքի տանիքը, վերանորոգել աշխատասենյակները և միջանցքը, աստիճանավանդակը, մարզումների և բոնցքամարտի դահլիճները՝ փոխելով փայտե հատակը, որպեսզի մարզադպրոցի սաները հնարավորություն ունենան մարզվելու առավել նպաստավոր պայմաններում:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ-ամերիկյան «Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ» բարեգործական հիմնադրամ (GLENDELALE, CA9125, Tel. 8182460125)
4.	Ծրագիրը կատարողը	«Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպություն (հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Ալ. Մանուկյան 5/1, ՀՎՀՀ՝ 06804407)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Սպիտակ քաղաքի Այգեստան 6 հասցեում. կրթական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	35,083 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 16,685,368 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղ. Սպիտակ, Այգեստան 6, ՀՎՀՀ՝ 06803138)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է 2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի մատի 31-ը փոխել մարզումների դահլիճի և բոնցքամարտի դահլիճի փայտե հատակները, ջերմամեկուսացնել առաջին մասնաշենքի տանիքը, վերանորոգել մարզումների և բոնցքամարտի դահլիճները, աստիճանավանդակը, աշխատասենյակները և միջանցքը՝ ընդհանուր 35,083 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 16,685,368 դրամ արժողությամբ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք են բերվելու հետևյալ ծառայությունները՝ մարզումների դահլիճի և բոնցքամարտի դահլիճի փայտե հատակների փոխարինում, առաջին մասնաշենքի տանիքի ջերմամեկուսացում, մարզումների և բոնցքամարտի դահլիճների, աստիճանավանդակի, աշխատասենյակների և միջանցքի վերանորոգում: Պայմանագրի արժեքն է 35,083 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 16,685,368 դրամ:
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Ծրագրով կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Սպիտակի համայնքապետարանի կրթության բաժնի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ